№ 112 ՅՈՒԼԻՍԻ 6 (18) 1878 ՅՈՒԼԻՍԻ 6 (18) № 112

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց խնդիրը։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Համզաչիմանից։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Իտալիա։ Թիւրքիա։ Նամակ Գերմանիայից։ Նամակ Թիւրքիայից։ — «Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Ցեղեկացոյց։ — Բանասիրական։ Նամակ խմբագրին։

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐԸ

Ռուսաց «Голосъ» լրագիրը իր 177 համարում կրկին նուիրում է մի առաջնորդող յօդուած հայոց խնդրին։ Լրագիրը ասում է որ հայոց պատգամաւորութեան կողմից կօնգրէսին ներկայացրած յիշատակագիրը գրված է Անգլիայի ճնշման տակ և չէ կարող ապահովացնել Թիւրքաց հայերի քաղաքական կեանքի զարգացումը, չէ կարող տալ նրանց ինքնավարութիւն։

Լրագրի կարծիքով Սան-Ստէֆանօի դաշնագրի 16-որդ յօդուածը, որ Ռուսաստանը պահանջել է Թիւրքաց Հայաստանի համար, աւելի մեծ իրաւունքներ է խոստանում հայերին և աւելի կապահովացնի նրանց, քան թէ հայ դելէգատներից ներկայացրած յիշատակագիրը։

Անգլիայի նպատակը, ռուս լրագրի կարծիքով, նրանումն է պարունակվում, որ Թողնի Հայաստանը միշտ ճնշված դրութեան մէջ և պահպանի ռուսաց սահմանների մօտ սշանջենաւոր անիշխանութեան մէջ ընկած, անկարգ մի երկիր, որ երբէք չը կարողանայ ազատ շունչ քաշել և ինքնուրոյն կեանքով ապրել։

«Голосъ» լրագիրը նոյն համարում տպում է մի հեռագիր Բերլինից, որից երևում է թէ յունիսի 26-ի (յուլիսի 8-ին) կօնգրէսի նիստի մէջ, ուրիշ շատ հարցերի հետ միասին վճռված է եղել և հայոց խնդիրը, համեմատ Սան-Ստէֆանօի դաշնագրի 16-որդ յօդուածի, աւելացնելով այդ յօդուածին այն կէտը, թէ եւրոպական մի յանձնաժողով պիտի կազմվի, որ վերահսկութիւն ունենայ Հայաստանի համար պահանջած վերանորոգութիւնները մտցնելու և իրագործելու նպատակով։

Ռուս լրագրի կարծիքով՝ ստեղծել Թիւրքաց Հայաստանում հայոց ինքնավարութիւն Ռուսաստանի շահերին համապատասխան է, բայց Անգլիայի շահերի դէմ է։

Մենք չենք կարող չը համաձայնվել «Голосъ» լրագրի յայտնած մտքի հետ, և մեր կողմից միշտ յայտնած ենք նոյն միտքը։ Միայն այստեղ կաւելացնենք, որ և միւս եւրոպական տէրութիւնները, որոնք միշտ աշխատում են ամեն բանում հակառակել Ռուսաստանին, վերջապէս պէտք է հասկանան որ և ընդհանուրի համար օգտաւէտ կը լինէր ստեղծել Փոքր-Ասիայում Հայաստանի պէս ինքնավարութիւն ունեցող մի փոքրիկ մարմին, բնակեցրած հայերից, այդ տոկուն, աշխատասէր, բուն եւրոպական, քաղաքակրթութեանը ընդունակ ազգից, որ ժամանակով իր կողմից լուսաւորութեան և քաղաքակրթութեան տարածող և առաքեալ կարող է դառնալ Ասիայում։

Եւրոպան քաղաքակիրթ երկիր է,—ժամանակ է մոռանալ քաղաքակրթութիւն մտցնել և Ասիայում։ Հայերը այդ նպատակի համար ամենալաւ գործիք են։

Մի՞թէ արևմտեան մարդասէր Եւրոպան մինչև այժմ այդ չէ հասկացել, կամ չէ կամենում հասկանալ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԱՄԶԱՉԻՄԱՆԻՑ

22 յունիսի

Համզաչիմանը, որի մէջ կենում եմ ես, իմ մայրենի գիւղն է, որի ներկայում ունեցած զբաղմունքական առաջադիմութեան քայլերը տեսնելով, չեմ կարող գրչի տակ չառնել։ Թէև այս գիւղը մօտ 15 տարի է, որ ձգտում էր մի տարրական ուսումնարանի հիմնարկութիւն և նրա գոյութիւնը պահպանող դրամագլուխ ունենալ, սակայն այդ միշտ չէր աջողվում նրան խաչնդոտների և կուսակցական երևոյթների առթիւ։ 68 թվին իրանց մէջ ստորագրութիւն բաց անելով հաստատեցին Ս. Խաչատուրեանի տունը, որպէս դպրոց։ Ամենքը ուրախ էին, որ գիւղում դպրոց կ'ունենայ,

և դրամագլուխը մօտ 3000 ռուբլ հասցնելով, համազգիմանցիք ընտրեցին 4 հոգաբարձուներ և վերատեսուչ տեղական անձինքներից, և մի խնդրագրով առաջարկեցին բարձր հոգևոր իշխանութեան ի հաստատութիւն, և ստացան թէ ընտրելի անձանց հաստատութեան թուղթը իրանց պաշտօնի մէջ և թէ օրհնութեան կոնդակ ստորագրողներին։

Երբ հասաւ այն կէտը որ հաստատած անձինք ըստ իրանց կոչման պէտք է գործէին, բարձրացան կուսակից գլուխներ, և նրանց հետևելով այլ և այլ խոչնդոտներ, գործը մնաց կիսատ—անիրագործելի։ Գործող անձինք գնացին իրանց անձնական պարապմունքին, իսկ ստորագրած դրամները դեռ ևս մնում են անշարժ—մութ աշխարհի կեղտոտ ակիւններում։ Անցան ամիսներ, զղջացին խռովայոյզ եսական անձինք, բայց էլ ուշ էր, հիմայ էլ «կռունկը չէ ուզում ընկերանալ անդղի հետ»։ Հակամիտութիւնը դէպի ուսում, գիւղացիներին ոչ մի տարի առանց ուսուցիչ վարձելու չէր թողում. բայց անփորձութիւնն ու ուսուցիչ ընտրելու և ուսումնարանի ներքին պահանջների պարագաներում, միշտ հակառակ կողմն էր ձգում նրանց դիտաւորութիւնները և երկար ժամանակ նրանք այսպէս աննպատակ ոքնում էին։ Ասած է, «երկաթը քանի բանեցնես, այնքան աւելի կը բացվի—արծաթի նման կը փայլի»։

Մինչև հիմայ նրանք վարձում էին ուսուցիչ տարեկան կամ 6 ամսվայ պայմանով և ոչ աւելի 120—150 ր. ռոճիկով, իսկ ներկայ տարվայ մայիսի մէկից ընդունեցին իրանց որդւոց համար ուսուցիչ Մ. Արագածունուն տարեկան կանխիկ 500 ր. ռոճիկով և երեք տարի պայմանով, մի և նոյն ժամանակ, ուսուցչի բոլոր ծախսը իրանց վրա կրելով։ 68 թուականի փորձը մաքեբում անմոռանալի ունենալով, նրանք այս անգամ բ. լորվին այլ մտքի վրա հիմնեցին իրանց սկզբունքը։ Հանգանակեցին 800 ր. որից 500 ր. որ ս առաջին տարվայ ռոճիկ տալով պ. Արագ ունուն, մնացածը յանձնեցին իրանց հաճութիւնը ընտրած երկու հոգաբարձուներին, պ. Յովհաննէս Մատինեանցին և Աւետիք Անանեանցին, որոնք երկու թարմ ուժերի և հասանողութեան տէր անձինք են։ Այսպէս անելու են և առաջիկայ և վերջին տարին։ Իբրև պաշտպան ուսումնարանի գոյութեան կարդեցին վերատեսուչ տեղիս արժ. Եսայի Ք. Տ. Եսայեանց, որ յայտնի է ժողովրդին իր վառ ուսումնասիրութեամբ։ Զունենալով պատրաստի դրպ

---

*) Զարմանալի երևոյթ, քանի արհեստաւորներ նին և աղգասէր են դարձել, երևի Սեդրակեան Մարկս Հախումեանին են աշակերտել. «Ուստա Մարկոս, ասում է Կիրակոս, էդ քնձահոր լակոտ վարժապետներ գիտես ինչ են անում, ուզում են.... ծածուկ բան է, ուզում են (բերանը նրա ակ ելնի մօտացնելով) ուզում են մեր չկոլ..ցնելու» Լու երական անունը որ պ. Շանչեանցի ժամանակ հալածելու զէնք էր, այժմ զօրութիւնը կոր ել է, օտարամոլ բառն է հալածում։

քանի ուսուցիչների արձակելը, այլ օրէնք էին հաստատում, որ ուսուցիչներ իրաւունք չունենան ազգային հանդէսներ, թատրոնական ներկայացումներ տալ, երևի այն մտքով որ ուսումնարանը չօտարանայ։ !! *) Իսկ ուսուցչական խումբը փառք, պատիւ իրան անուան, ջանք, աշխատութիւն, դրամ ոչինչ չը խնայեցին և առաջին անգամ Շուշում բաց արին մի ամենաբարեկարգ օրիորդաց ուսումնարան, մտիկ չը տալով խոչնդոտներին։ Հրաւիրեցին երկրորդ վարժուհի, յանձն առնելով նաև ձրիապէս դասախօսել, և դա դարձաւ մի օրինակելի դպրոց, պարծանք քաղաքի, որի դէմ չը կարողանալով մրցել քաղաքականը կուլ գնաց նրան։ Իրանց ծախսով գնեցին թատրոնական կահ կարասիք, բայց Հախումեանը մերժեց իր տունը, ռուսաց խմբին տալով. Սեդրակեանը արդելեց ուսումնարանի դահլիճում բեմ չինելը, և ուրիշ յարմարաւոր տեղ չը ճարվելով, ներկայացումը մնաց։ Չը պէտք է ուրանալ գնդապետ պ. Ց. Քալանթարեանի, պ. Ա. Ամբրումեանի և պ. Դ. Ադամեանի համակրութիւնը, որոնք միակ պաշտպան դարձան ուսուցչական խմբին և քաջալերեցին նրանց ձեռնարկութիւնը։ Այսպէս տեսուչը և ուսուցիչները պաշտպանելով ուսումնական մասի անկախութիւնը, և հոգալով ուսումնարանների առաջադիմութիւնը, անցկացրին ծանր և տրքնութեան ամիսներ, և պատրաստվում էին մի փառաւոր հարցաքննութեամբ պսակել իրանց գործը։ Անգործ չէին և վ.-ի միւս անդամները. նրանք ուշի ուշով նկատում էին առաջադիմութիւնը և ակներև տեսնելով մօտակայ իայատ-

---

*) Ս. սրբազանը հ. ժողովի ձայնից բազմութիւնը միշտ իր կողմ ունենալու համար, հոգաբարձական հինգ թուի վրա աւելցրեց և երեք քահանայ որ հակառակ է կանոնադրութեան չորրորդ յօդուածին։

ռակութիւնը, չտալով բերել տուին Սինոդից արձակման առաջադրութիւնը և մայիսի 23-ին տագնապով արձակեցին տեսչին։ Արձակվեցան և ուսուցիչները. փակվեց բ. դասատունը, փոքր դասատներից շատերը մտան քաղաքական ուսումնարանը, և օրիորդաց ուսումնարանն էլ ենթարկվեց կործանվելու վտանգին։ Դարձեալ ասպարէզ մնաց տէրտէրներին և տիրացուներին. Սեդրակեանը հասաւ իր նպատակին... ուսումնարանը ազատեց օտարամոլների ձեռից, և վէճը տներից դուրս եկաւ հրապարակ։

Այս բոլոր չարիքների առաջն առնելու համար, մայիսի 24-ին պատգամաւորներ ընտրվեցան և երեք անգամ ներկայացան Սեդրակեանին, ստիպելու նրան, նոր հոգաբարձուների ընտրութիւն նշանակել ժամանակ լրացած հինների տեղ։ Մայիսի 28-ին մօտ 200 հոգի ժողովեցան ուսումնարանի բակում ընտրութիւն անելու։ Սեդրակեանը ամեն հնար գործ դրեց նրանց դիտաւորութիւնը արդելելու, պատճառելով թէ ընտրողները քիչ են, (մինչ անցեալ տարի իր ներկայութեամբ 40 հոգով եղաւ ընտրութիւնը) ստիպված պահանջողներից, ընտրութիւնը սկսվեց և քուէարկվեցան վեց անձինք։ Մի սափրիչ և մի քանի արհեստաւորներ աղմուկ բարձրացրին, վարդապետն էլ այդ նշանին էր սպասում, վերկացաւ տեղից և ինտրիգաններ անուանելով բազմութենից հեռացաւ։ Մի սարսափելի յիշոց սկսվեց և վարդապետը ոտից մինչև միրուքը փառաւորվեց։ Երրորդ օր 300 անձանց ստորագրութեամբ մի խնդիր տրվեցաւ Սեդրակեանին, որով պահանջում էինք մայիսի 28-ի վեց ընտրեալներից, ձայնների բազմութիւն ստացողներից, երկուսը մինը հոգաբարձու և միւսը կանդիդատ ընդունել, որով և 1877-ի ընտրեալների թիւը կը լրանար *) և 4 հին հոգաբարձուներ կը հեռանան պաշտօնից։ Մինչև այժմ էլ մեր խնդրին պատասխանած չեն, և լսվում է որ Սեդրակեանը դրա հակառակ մի խնդիր քահանաների ձեռքով ստորագրել է տալիս։

Թողնելով այս ամենը՝ որոնք թէ ինչ վախճան կը ստանան, մենք պատիւ կունենանք ձեզ հաղորդել, մեծապատիւ խմբագիր, մենք դառնանք դէպի հ. Սեդրակեանը, մի քանի հարցերով և սպասում ենք հրապարակական պատասխանին։

1) Ի՞նչ իրաւունքով, ինչ հիման վրա, հ. Սեդրակեանը հեռագրեց Վեհափառին, թէ դպրոցը օտարացնում են։

2) Պատճառն ինչ է, որ ուսուցչական ժողովի յայտարարութեամբ խնդրած թէ ուսումնական առարկաներ, և թէ կահ կարասիք չառնվեցան։

3) Ինչի հ. սուրբը ուսումնարանի դահլիճում բեմ չինելը արգելեց, և ամբողջ տարում ոչ մի անգամ ոտք չը դրեց ուսումնարան։

4) Թեմական տեսչի անունով ուսումնարանից 500 ր. ռոճիկ է ստանում Սեդրակեան, երկու տարվայ ընթացքում թեմի 167 գիւղերում քանի ուսումնարան բացեց։ *)

5) Ինչը ստիպեց Սեդրակեանին իր համախոհներով չտալով արձակել տեսչին, քանի որ սինոդի ուղարկածը առաջադրութիւն էր և ոչ հրաման, քանի որ հարցաքննութեան 10—15 օր էր մնացել։ Հարկ չէր իմանալ, թէ այդ պարոնները ամբողջ տարում ինչ էին արել, աւելի արժանի էին մեր յարգանքին թէ նրա ատելութեանը։

6) Օրիորդաց ուսումնարանի անունով քահանայացուներից ստացած գումարը, ինչի ցարդ յանձնված չէ գանձապետին։

7) Ինչի պ. պ. պատգամաւորները նրա սեռնակը մտնելիս չրջապատված են գտնում պոլիցիականներով։ Ի՞նչ գործ ունէին պոլիցիականները ընտրութեան գործի մէջ։

8) Ինչու խաբեց մեզ տեսչի և ուսուցչաց հրաժարականները յետ տալում, ճշմարիտ է որ պ. տեսուչը զրպարտութենից և անկարգութիւններից զզուած, երկու անգամ հրաժարվեց, բայց մենք ժողովրդականներս խնդրեցինք և նա ընդունեց։ Ցանկալի կը լինէր որ Սեդրակեանը ինքը հրաժարվէր և իր հետ տանէր իր բոլոր յարուցած խռովութիւնը։

9) Հայր սուրբը և երկու հոգաբարձուներ պատուաւոր կերպով համոզեցին մեզ որ տեսչի արձակման համար իրանք ոչինչ չեն խնդրել սինոդից, ուրեմն ինչ արժանահաւատ լուրերի հիմանց վրա առաջադրութիւն եղաւ։

10) Սեդրակեանը խոստացել էր, որ երեք օրից յետ իր տեսուչը և ուսուցիչները պատրաստ կը լինեն, ուր և որոնք են այդ պարոնները։ Նա երբեմն Եպիսկոպոսեանի, երբեմն Բէկնազարեանցի, երբեմն Աղայեանցի անուններն է տալիս, ենթարկելով այդ պարոնների պատիւը, իբ դէմ չարացած ժողովրդի ուղիղ կամ սխալ դատողութեանը։

Ցոյս ունենք որ հայր Սեդրակեանը կը պատասխանի մեզ, նոյնպէս և պ. պ. հոգաբարձուները, արդարացնելով իրանց, իրանց վրա ծանրացած պատասխանատուութենից։

Մենք այս տողերը շատ կարելի է որ չը գրէինք եթէ պատուական «Մշակիդ» 88 № առաջնորդող յօդուածը բացատրութիւնների կարօտութիւն չունենար։

Շարունակութեան մէջ կը լինեն վ.հ. կաթողիկոսին և Սեդրակեան վարդապետին հասարակութեան կողմից ներկայացրած խնդիրների պատճէնները։ Ժողովրդի խնդրի համեմատ գրեցի։

Արսէն Թոխմախեանց

---

*) 167 գիւղերում ոչ մի ուսումնարան չը կայ։ Սեպ. ամսում կառավարութեան ծախսով 4 ուսումնարան է բացվելու գիւղերում։

բովանդակութիւնը հետևեալն է. 1) Առաջնորդող յօդուած, 2) Մանկական ընթերցանութեան գրքեր, 3) Ֆրէօբէլի կենսագրութիւնը, 4) Մայրենի լեզուի ուսումը տարրական ուսումնարանների մէջ, 5) Այլ և այլք, 6) Յայտարարութիւն, 7) Նամակագրութիւն խմբագրութեան կողմից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱ

Յունիսի 28-ի երեկոյեան Վենեցիայում համբաւ է տարածվել թէ Տրիէստի բնակիչներից մի քանիսը կամեցել են Վենեցիա գալ իրանց զուարճութեան համար. բայց կառավարութիւնը արգելել է։ Շուտով մի խումբ է կազմվել երիտասարդներից որոնք սկսել են բղաւել «Կեցցէ իտալական Տրիէստէ» և աւստրիական ընդհանուր հիւպատոսի տան առաջև գնալով, դրան վրա դրված զինանշանը վայր են դցել։ Տեղական իշխանութիւնը անմիջապէս հասել և աւստրօ-ունգարական զինանշանը էլի դրել է իւր տեղ մեծ հանդէսով։ Վենեցիայի պատուաւոր բնակիչներից շատերը հիւպատոսարան գնալով, իրանց ցաւը յայտնել են երիտասարդների այդ անխոհեմութեան համար։ Նահանգապետը երկու անգամ է գնացել ընդհանուր հիւպատոսի մօտ իր սաստիկ ցաւը յայտնելու համար։ Նոյնպէս իտալական կառավարութեան մինիստր—նախագահը իր ցաւակցութիւնը յայտնել է Հռոմում աւստրիական գործակատար պ. դը Գրաւէնէկին և խոստացել է պատժել տեղական իշխանութեան պաշտօնատարներին, եթէ նրանց անհոգութեամբ պատահած է այդ դէպքը։ Աւստրօ-ունգարական կառավարութիւնը բաւականացել է Իտալիայի կառավարութեան տված այս բացատրութիւններով և երկու տէրութիւնների մէջ բարեկամական յարաբերութիւնները շարունակվում են։

ԹՈՒՐՔԻԱ

Կ. Պոլսից յունիսի 30-ին հաղորդում են «Times» լրագրին հետևեալը։ «Ասում են այստեղ թէ Ֆրանսիական նաւատորմը կը գայ Մարմարայի ծովը։ Աւազակների խումբերը այնչափ շատացել են Թեսալիայում որ յունական կառավարութիւնը որոշել է շատ զօրքեր ուղարկել սահմանագլուխը իր հպատակներին պաշտպանելու համար։ Լազիստանցի ծովասպատակները նորից երևում են Մարմարայի ծովի ափերում և անհանգստացնում են փոքր նաւերին որոնցից մի քանիսը արդէն կողոպտել են։ Թուրքաց նաւերը ուղարկվեցան այդ աւազակներին հալածելու համար։ Բօսնիայի և Հերցէգովինայի գրաւելու խնդիրը սաստիկ վրդոված է Բ. Դրան։ Թուրքաց կառավարութիւնը ցանկանում էր որ գոնէ որոշվեր թէ որչափ զօրքերով և որչափ ժամանակ կը գրաւվեն այդ նահանգները. բայց երևի թէ Աւստրիան չէ ուզում և ոչ մէկ կերպով սահմանափակել իր զինուորական գործողութիւնները։

«Հետևեալ անեկդօտը բաւականի ցոյց է տալիս թէ սուլթանի միտքը ինչ դրութեան մէջ է գտնվում այժմ Գերմանական դեսպան Ռէյս իշխանի կինը «Ինաս բարովի» համար սուլթանի հետ տեսակցած ժամանակ, ուրախութիւն յայտնել է ժողովրդի կողմից նորին մեծութեան ցոյց տված յարգանքի և համակրութեան համար և ասել է թէ տէրութեան գլխաւորը պէտք է որ վարձատրէ իր ժողովրդի այդչափ անձնուիրութիւնը, աւելի շատ անգամ երևալով նրան։ Սուլթանը զարմացման նշաններ է ցոյց տվել և իշխանուհու գնալուց յետոյ, դառնալով դէպի իր մօտ գտնվողները, ասել է ճիշդ այս բառերով «Գերմանիայի գիտենալ թէ այդ կնամարդը ինչ շահ կարող է ունենալ ինձ սպանել տալով։»

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

Բերլին. 6-ին յուլիսի. 78

Կոնդրէսի հարցերը առաջ են գնում և հետզհետէ իրանց վճռողական լուծման են հասնում։ Հեռագիրը ձեզ տեղեկութիւններ բերած կը լինի ինչպէս որոշվեցան եւրոպական Թուրքիայի բազմաթիւ խնդիրները. բայց ներեցէք եթէ ամենքն էլ միասին այստեղ կրկին յիշեմ։ Բոլ-

---

Թոխմախեանց հարցերը առաջ են գնում և հետզհետէ իրանց վճռողական լուծման են հասնում։ Հեռագիրը ձեզ տեղեկութիւններ բերած կը լինի ինչպէս որոշվեցան եւրոպական Թուրքիայի բազմաթիւ խնդիրները. բայց ներեցէք եթէ ամենքն էլ միասին այստեղ կրկին յիշեմ։ Բոլ-

գարիան երկու մաս բաժանվեցաւ. հիւսիսայինը անկախ իշխանութիւն դառնալով և իր սեփական մի իշխան ստանալով, հարաւայինը (լորդ Բիկոնսֆիլդի առաջարկութեան համեմատ Արեւելեան Ռումելիա անուն ստանալով) մի ինքնավարութիւն վայելող, բայց Թիւրքիային հարկատու գաւառ է դարձել, իր սեփական զօրք ունենալով և իր սեփական կառավարութիւն։ Թիւրքիան իրաւունք ստացաւ այս գաւառի սահմաններում (թէ հարաւում թէ հիւսիսում, ուրեմն Բալկանների մէջ) իր զօրքերը ուղարկել կարևոր ժամանակին։

Նախկին երկու հարկատու պետութիւնները Ռումինիան և Սերբիան իրանց լիակատար անկախութիւն ստացան Թիւրքիայից, այն պայմանով որ կատարեալ ազատութիւն դաւանութիւնների կը մացնեն իրանց երկիրներում, հրէաներին էլ նոյն իրաւունքներ չնորհելով, որոնք վայելում են քրիստոնեաները և մահմետականները։ Ռումինիան պիտի Ռուսաստանին վերադարձնէ Բէսարաբիան, բացի մի փոքր կտոր հողի, որ գտնվում է Դունայի Կիլիա անուանած բերանի հիւսիսում, այնպէս որ Ռուսաստանը չի հասնի մինչև այս գետը։ Բացի սրանից Ռումինիան ստանալու է իբրև վարձատրութիւն պատերազմական ծախքերի համար ամբողջ Դոբրուջան և նմանապէս Բոլգարիայից մի կտոր հող Սիլիստրիայից մինչև Մանգալիա Սև ծովի վրա։

Դունայի բոլոր ամրոցները կը քանդվեն։ Այս գետի միջազգային նաւագնացութեան համար մի միջազգային մասնաժողով պիտի չարունակ կառավարութիւնը իր վրա առնի և միայն Թիւրքիայի նախկին ներկայացուցիչների տեղ այս մասնաժողովի մէջ կը մասնակցեն Ռումինիայի և Բոլգարիայի պատգամաւորներ։

Սերբիան անկախութիւն ստանալով վերև յիշված պայմաններով կը ստանայ նաև Նիշ գաւառը, բայց ոչ Նովիբազար։

Զերնոգորիան նմանապէս անկախ ճանաչվեցաւ, բայց ստանալով մի նաւահանգիստ Ադրիական ծովի վրա, իրաւունք չը պիտի ունենայ պատերազմական նաւեր ունենալու, այլ միայն առևտրական։ Նա կը ստանայ նոյնպէս նոր երկիրներ դէպի հարաւ և արևելք։

Բոսնիան և Հերցեգովինան առժամանակ պիտի Աւստրիայի կառավարութեան տակն անցնեն անորոշ ժամանակով։ Թիւրքիան պարտաւորվում է իր զօրքերը յետ քաշել այս երկու գաւառներից —թէև առժամանակ դեռ ևս դժուարութիւններ է անում։

Յունաստանի հարցը դեռ ևս որոշված չէ և աւելի դժուարանում է քանի որ Կրիտի (Կանդիա կղզու վրա) չարունակվում է արիւնահեղ ապստամբութիւնը։ Յունաստանի հարցը, ինչպէս լսվում է, վերջինը կը լինի, որ պիտի որոշվի կոնգրէսից։ Այժմ Հայաստանի հարցի մասին է խօսվում, բայց ինչպէս երևում է դեռ ևս մի քանի դժուարութիւններ են ծագում այս առիթով։ Բաթումն է գլխաւորապէս այն հարցը, որ առժամանակ զբաղեցնում է կոնգրէսը. այս առիթով ահա երեք օր է, որ բոլորովին տարբեր լուրեր են տարածվում լրագիրների միջոցով։

Մի անգամ ասում են՝ Բաթումը Ռուսաստանի պիտի անցնի, յետոյ թէ Անգլիան, այդ տեղը իր օգուտների համար նշանաւոր համարելով, ընդդիմանում է այդ որոշման, յետոյ կրկին, թէ Անգլիան առաջարկում է Բաթումը դարձնել ազատ նաւահանգիստ, կամ (և վերջին լուրը այդ է) յանձնել Ռուսաստանին այն պայմանով, որ Բաթումը ամրացած տեղ չը լինի, այլ միայն առևտրական նշանակութիւն ունենայ։ Ինչպէս երևում է կոնգրէսի այլ պատգամաւորները այս հարցը մասնաւոր հարց համարելով, որ պիտի վճռվի Ռուսաստանի և Անգլիայի մէջ, չեն խառնվում այս որոշումների և վէճերի մէջ։

Բուն հայոց հարցը, հայոց ներքին ինքնավարութիւնը, երևի այսօր օրակարգի վրա կը լինի։

Մէմուարի բնագիրը ձեզ ուղարկելով, հայերի պահանջների մասին այլ մանրամասներ հաղորդելու աւելորդ եմ համարում. կաւելացնեմ միայն, որ այդ մէմուարը ամբողջ եւրոպական լրագրութեան կողմից մեծ համակրութեամբ ընդունվեցաւ և ամբողջ մամուլը միաձայն հաստատում է որ Թիւրքիայի հայերի պահանջները շատ համեստ և իրաւացի են և կարծում է, որ կոնգրէսը անպաճառ կը պաշտպանի հայերի ցանկութիւնները։ Այս մէմուարի տպագրութեան առիթով մի մեծ միտինգ (meeting, ժողով) հաւաքվեցաւ ամսիս 1-ին Լոնդոնի անգլո-հայ մասնաժողովի կողմից և ներկայ էին ամենանշանաւոր մարդիկ, թէ ազատական թէ պահպանողական կուսակցութիւններից, թէ հայեր Մանչէստրի և Լոնդոնի։ Հայերին ցոյց տուած համակրութիւնը շատ նշանաւոր էր և որոշվեցաւ խնդրել լորդ Բիկոնսֆիլդին ամենայն ուժով պաշտպանել հայերին։ Այստեղի շրջանների մէջ պատմում են, որ լորդ Բիկոնսֆիլդի վրա այդ միտինգ մեծ տպաւորութիւն գործեց և նա կրկին համակրութիւն է ցոյց տալիս հայերի գործին և նրանց իրաւացի պահանջներին։

«Daily News» Լոնդոնի լրագիրը բերում է այս միտինգին վերաբերեալ բոլոր մանրամասներ և մինչև անգամ մի քանի ճառեր, որոնց թւում նախկին մինիստր լորդ Կարնարվոնի, պ. Ֆօրստերի, և մի քանի հայ պարոնների ճառերը։ Նախագահութիւնը այս միտինգի ժամանակ վարեց Վէստմինստէրի աբբան։ Միտինգին ներկայ չը գտնվողները, ինչպէս Կէնտբրբրիի արքեպիսկոպոսը, Լոնդոնի, Օկսֆորդի, Մանչէստէրի, Ուինչէստէրի եպիսկոպոսները և շատ աշխարհական նշանաւոր մարդիկ, համակրութեան նամակներ ուղարկեցին, վերջապէս ստացվեցան հեռագիրներ որոնց թւում էլ Կակաթայի հայոց արքեպիսկոպոսից և Բերլինից խորէն արքեպիսկոպոս Նարբէյից։

Ա. Արծրունի

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 21 յունիս 78.

Պատրիարք սրբազանը Բերլին երթալու դիտաւորութենէն հրաժարեցաւ, բաւական համարելով թուանիշ հեռագիրներ յղելու համար ստացած արտօնութիւնը։ Շատ անգամ հեռագիրներ կը գան այժմ Բերլինէն պատրիարքարան և շուտով հրահանգներ կը տուին պատգամաւոր սրբազաններուն։ Յունիս 18-ին, կիրակի օր, Ս. պատրիարքը երկու ծածկագիր հեռագիր ստացաւ Բերլինէն և շատ ուրախացած, անմիջապէս գնաց Թարարիա անգլիական և ֆրանսիական դեսպաններու այցելութեան։ Լրագիրները հրատարակեցին թէ առաջին հեռագրի իմաստը այս է եղեր որ գահաժառանգ իշխանը ճաչկերոյթի հրաւիրեր է հայոց պատգամաւորներուն Պոսդամի պալատին մէջ. երկրորդն ալ կիմացունէ եղեր թէ Բիսմարկ իշխանը օրակարգին մէջ է անցուցեր հայոց խնդիրը և աւագժողովի սեղանին վրա է դրեր պատրիարքին յղած բոլոր թուղթերը։

Ֆրանսիական «Times» լրագրին Բերլինէն գրուած մի թղթակցութեան մէջ կը կարդանք հետևեալ տողերը, ֆրանսիական դեսպանատան մէջ տրուած մի մեծ երեկոյթի նկատմամբ։ «Դիտողութեան արժանի եղած էր նաև երկու հայ պատրիարքներու սև հանդերձների ձևը։ Լուկրէցիա Բորջիայի սևազգեստ ապաշխարողներին նման հագուստներ էին հագել։» Ուրեմն հայոց պատգամաւորներն ալ հրաւիրուած են եղեր ֆրանսիական դեսպանատան երեկոյթին։

«Daily News» անգլիական լրագիրը հրատարակած է Կ. Պոլսէն ստացած մի հեռագիր թէ հայոց ազգային ժողովը առաջարկեր է պատրիարքին կամ Բերլին երթալ կամ պատրիարքութենէ հրաժարվիլ։ Բայց այդ լուրը սխալ է։

Բերլինէն այստեղ հասած լուրերը շատ գոհացուցիչ են։ Խրիմեան և Խորէն սրբազանները սիրալիր ընդունելութիւն գտած են աւագժողովի անդամներէն որոնք յուսալի խոստումներ տուեր են իրենց։ Բիսմարկ իշխանն և գերմանական կառավարութեան պաշտօնեաները մեծ համակրութիւն են ցոյց տուեր։ Գահաժառանգ իշխանը իր պաշտօնական համազգեստներ հագած, ընդուներ է հայոց պատգամաւոր արքեպիսկոպոսներուն որոնք խնդակցութիւն յայտներ են Վիլհէլմ կայսրի կենաց ազատվելու համար և խնդրեր են իր պաշտպանութիւնը հայոց դատի համար։ Իշխանը պատասխաներ է այս բառերով. «Շատ գոհ եղայ ձեր այցելութենէն. ձեր խնդակցութիւնն ու բարեմաղթութիւնները իմ վեհափառ հօրս պիտի հաղորդեմ։ Անտարակոյս եղէք որ հայոց խնդիրն ալ իր օրինաւոր լուծումը կը գտնէ աւագժողովին միջոցով։» Պատգամաւորները ջերմ շնորհակալութիւն և բարեմաղթութիւններ անելով, հեռացեր են իշխանի մօտէն։ Ոչ պակաս ուրախալի են Բ. Դուռը հասած լուրերը հայոց նկատմամբ։ Կարաթէոդորի-փաշան հեռագրած է Բ. Դուռը թէ հայոց խնդիրը մեր կարծածէն աւելի նշանակութիւն ունեցաւ. ինչ բարեկարգութիւններ որ պիտի անէք Հայաստանի համար, շուտ արէք և աշխատեցէք որ հայ պատգամաւորները վերադառնան։ Կ. Պոլիս։ Բ. Դուռէն մի հրամանագիր եկաւ պատրիարքարան թէ Ալի Շէֆիկ բէկը կառավարութեան կողմէն քննիչ որոշուած է քննելու համար Հայաստանի մէջ եղած հարստահարութիւնները և պատժելու համար յանցաւորները։ Հրաւիրեր է նաև որ պատրիարքարանն ալ մի անձ որոշէ Թիւրք քննիչին ընկերանալու համար։ Հինգշաբթի օր խառն ժողովը հաւաքուեցաւ. այս խնդրոյն համար և երկար խորհրդածութիւններէ յետոյ որոշեցին մերժել Բ. Դրան այդ առաջարկութիւնը, հասկացունելով միանգամայն որ եթէ օսմանեան կառավարութիւնը բարեկարգութիւններ ունի անել և յանցաւորներ ունի զորս պիտի պատժէ, ազատ է գործել ինչպէս որ հաճելի է իրեն. մենք չենք կարող միջամտել։ Այս կը ցուցնէ թէ ինչ մեծ փոփոխութիւն է եղած մեր ազգային գործերուն մէջ։ Մի ժամանակ որ չատ հեռու չէ, հայեր ինչ մեծ եռանդով և շնորհակալութեամբ պիտի ընդունէին այդպիսի մի առաջարկութիւն, բայց այսօր կը յայտնեն կառավարութեան թէ այլ ևս չեն հաւատար նորա խոստումներուն և թէ իրենց փրկութիւնը ուրիշ միջոցներով կը փնտռեն։

Ազգային ժողովի բացման առթիւ պատրիարքի խօսած ճառը արդէն յղած եմ ձեզ։ Յաջորդ նըստին, Ասլանեան Ստեփան-փաշան մի ատենախօսութիւն արաւ իր ատենապետ ընտրուելուն առթիւ։ «Ժամանակը ծանր է, ասաւ, և երկունքի մէջ։ Ազգը մեծ յոյսեր կը տածէ. մեր ազգասէր պատրիարքը արթնութեամբ կը հսկէ յամենայնի և նորին հովանաւորութեան ներքև վարչութիւնը հոգ և խնամք չը խնայեր ազգային գործոց բարւոք տնտեսութեան. բայց մենք ալ պէտք է որ միշտ պատրաստ գտնուինք ի ժամու և ի տարաժամու օգնութեան հասնել մեր պատուական հօր և ամենայն նկատմունք, կիրք և տարաձայն կարծիք անդամ հայրենեաց սեղանին վրա զոհելով, ջանանք արժանի հանդիսանալ ազգին վստահութեան և անքասիր ներկայանալ ապագայ անողոք պատմութեան։» Ստեփան-փաշան, թէպէտ կառավարութեան պաշտօնատար, իր այդ վեմ և ազգասիրական լեզուով կը յայտնէ թէ ինչպիսի սիրտ կը կրէ։

Հնդկաստանցի անուանի վաճառական պ. Սէթ Աբգար Լոնդոնէն գրած է Ս. Պատրիարքին թէ մտադիր է Կ. Պոլիս գալ։ Պ. Սէթ Աբգարին հայոց խնդրի համար արած աշխատութիւնները արդէն յայտնի են։

Հ. Կղեմէս Վ. Սիսիլեանի մահը ամեն ազգայիններու մեծ ցաւ պատճառած լինելով ինք թէպէտ Տիգրանակերտ վախճանած, նորա յիշատակի համար դամբանական հանդէս կատարեցին այստեղ։ Հ. Հղեմէս Վիէննայի Մխիթարեան միաբանութեան անդամ էր. յետոյ բաժանվեցաւ այդ միաբանութենէն, հռովմէադաւան հայոց ներքին խնդիրներու պատճառով։ Իր աշխատութեան առարկայ եղած էր հնագիտութիւնը։ Եւրոպական հնագիտական ակադէմիաներու անդամ եղած էր և նոցա համարում կը վայելէր։ Ինք թէև յիսուն տարին անցուցած, բայց երիտասարդի նման եռանդուն, ազգային երաշնորով լի էր իր գլուխ։ Ընտանեկան ժողովներու մէջ, ազգային լսարաններու մէջ միշտ կատեանախօսէր ազգային հնութեանց վրա։ 12 տարի չարունակ Հայաստանի զանազան կողմեր ճանապարհորդելէ և խուզարկութիւններ անելէ յետոյ վերջին ժամանակ Կիլիկիա և ուրիշ տեղեր ալ պտըտեցաւ։ Երբ Կ. Պոլիս վերադարձաւ, 1870 թ-ին Բերայի մեծ հրդեհին զոհ եղան իր բոլոր գրութիւններ. բայց նա չը յուսահատեցաւ և դարձեալ աշխատեցաւ։ Ցանկալի էր որ ազգայինք մի ընկերութիւն կազմելով հրատարակէին նորա գրուածներ։ Ամսիս 18-ին, կիրակի օր, մի չատ փառաւոր հանդէս կատարուեցաւ հռովմէադաւան հայոց Օրթագիւղի եկեղեցւոյն մէջ, ի յիշատակ Հ. Կղեմէս Սիսիլեանի։ Կ. Պոլսի ամեն կողմերէն հայեր, առանց կրօնական խտրութեան, դիմած էին այդ եկեղեցին։ Եկեղեցականաց յատկացած տեղը տեսանք որ մեր կղերականներէն ալ վարդապետ և քահանայ կանգնած էին, մի հռովմէադաւան, բայց ազգասէր վարդապետի, Հ. Սիսիլեանի յիշատակը պատուելու համար հռովմէական եկեղեցւոյ մէջ։ Շատ ուրախալի է նաև կղերականներին մէջ երևցող այս ազատամտութիւնը, զի ազգին կրօնապէս բաժանուած մասերուն այսպէս սիրով կապուելը մեծ յոյսեր կը տայ ապագային համար։ Պատարագէն յետոյ ամբիոն ելաւ Հ. Օրմանեան երիտասարդ վարդապետը որ Հայաստանի անցեալը նկարագրեց, այժմեան ազգային վիշտերը ողբաց և աւետեց թէ ալ ժամանակը հասած է որ այս սուգի օրերուն յաջորդեն ուրախ օրեր։ Երեսուն տարիներ անցած են քանի որ մեր հռովմէադաւան եղբայրներու առանձին եկեղեցին կանգնեցաւ. այդ երեսուն տարիներէ ի վեր առաջին անգամն է այս որ Հայաստան անուն կը հնչուի կաթոլիկ եկեղեցւոյ գմբեթին տակ և այն ամբիոնէն ուր ժամանակով Հ. Ամպէրպոյ գովեստներով կը հռչակէր Սիլլաբուսը, այսօր Հ. Օրմանեան կը քարոզէ հայութիւն։ Կ. Պոլսի լրագիրներէն մին հրատարակած էր թէ Հ. Սիպիլեան վերջին թոչակ է ընդունել լատին կրօնաւորի ձեռքէն և դատապարտել է իւր անցեալը։ Հ. Օրմանեան իւր քարոզի մէջ կը հերքէ այդ լուրը և կաւելացնէ թէ՝ «ենթադրենք թէ ճշմարիտ եղած լինի. բայց մթթէ մահուան դուռը հասած Սիպիլեանի գործերը աւելի արժէք կունենան քան թէ առողջ մտքով և առողջ մարմնով Սիպիլեանի խօսքերը և գործերը։ Ես ալ մի օր մահուան անկողնի մէջ պարկած էի, գուցէ իմ ձեռքերն ալ առանց ես գիտնալու իմ անունս գրած լինեն։ Այն բոպէին որ մարդ դէպի յաւիտենականութիւն կերթայ, մի տեսակ էակներ կուզեն վախցունել և բռնաբարել խեղճ հոգեվարին խիղճը։» Այս ճշմարտութիւնը երբ մի կաթոլիկ վարդապետի բերանով կը քարոզուի հռովմէական եկեղեցւոյ մէջ, չէ կարելի անցնել առանց նշանակելու։ Երբ կը յիշենք Տատեան Պողոս բէկին փարիզ մեռած ժամանակ կաթոլիկ կղերին հանած վէճերը, կը մտածենք թէ ժամանակը իր 13—14 տարեկան ընթացքին մէջ ինչ մեծ փոփոխութիւններ արաւ։

Հ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Վիէննա, 3/15 յուլիսի։ «Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է, որ Բ. Դուռը պատուիրեց Բանեալուկի Թիւրքաց վարչութեանը հրատարակել բոլոր բնակիչների գիտութեան համար, որ աւստրիական զօրքերը բնակիչների հետ կունենան ամենաբարեկամական յարաբերութիւններ։ Բանեալուկի նահանգապետը յայտնելով սրա մասին բնակիչներին հրամայեց Բամականի բոլոր գաւառներին ամենաբարեկամական կերպով ընդունել աւստրիական զօրքերը։ Բնակիչները հանդուցացան Բոսնիայի ապստամբները նոյնպէս հակված են հնազանդվել կոնգրէսի վճիռներին։

Ս. Պետերբուրգ, 5 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 97 ր. 50 կ., երկրորդ 96 ր. 25 կ. երրորդ 96 ր., չորրորդ 96 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 239ր., երկրորդ 238 ր. 50 կ., արևելեան 95 ր. 50 կ., ոսկին 7 ր. 75 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25,62 պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 217 մարկ, Փարիզի վրա 267 Ֆրանկ 50 սանտիմ։ Տրամադրութիւնը թոյլ է։

Վիէննա, 3/15 յուլիսի։ Զերնոգորցիները յարձակման երկիւղ կրելով Սկուտարի կողմից ամրացնում են Ալբանեան ափը։ Իշխան Նիկողայոս շուտով ուղևորվում է Նիկշիչ։

Ս. Պետերբուրգ, 5 յուլիսի։ Երէկ Բերլինից հասաւ այստեղ կոմս Շուվալով։

Բերլին, 5/17 յուլիսի։ Այսօր իշխան Գորչակովի Ծննդեան օրն էր։ Իշխանին լրացաւ 80 տարի։ Ալէքսանդր Կայսրի գունդի երաժշտական խումբը ի պատիւ իշխանի ռուսաց դեսպանատան առաջ առաւօտեան կոնցերտ տուեց։

Վիէննա, 4/16 յուլիսի։ «Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է, որ անգլիական հիւպատոսին աջողվեցաւ Թիւրքերի և Կրիտեան ապստամբների մէջ զինադադար կայացնել։ Թիւրքերը Թեսալիայում 33 տեղ հունձը այրեցին, նոյնպէս այրեցին և Սաֆիդէս գիւղը։ Նոքա ամրացնում են Դեմոկոս քաղաքը։ Բ. Դուռը վճռել է եռանդուն ընդդիմադրութիւն դնել Յունաստանի պահանջներին։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են ՍՊԻՏԱԿ ԲՈՒՄԱԶԵՑԱ վինուորականների շորերի համար արշինը 1 ր. և բարձր, ՈՒԻՆՍԻ շորերի համար և ՊԱՐՈՒՍԻՆ արշինը 50 կ., ՓՕՇԻՆԵՐ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ և ԽԻՆԱՑԻ ԲԱԼԶԱՄԵՆ (իւղ) $1^1/_4$ ր., ՍԱՊՕՆ 10 կ. և բարձր, ՅԻՏՐԱԴ մագնեցի $1^1/_2$ ր., ԲԻՍԿՎԻՏՆԵՐ 1 ր., և բարձր, ՖԻԼՏՐՆԵՐ 4-40 ր., երկաթեայ մահճակալներ 5 ր. և բարձր, սղոցներ 50 կ. և բարձր, ճանապարհի ԱՄԱՆՆԵՐ դիւժինը 3 ր., ԳՐԻԶՆԵՐ արզը 15 կ. և բարձր, ՐԵՎՕԼՎԵՐՆԵՐ 6 ր. և բարձր 1000 ասեղ 80 կոպէկ, արական ԹԱՄԲԵՐ 40 ր. և բարձր. ԻԴԱԿԱՆՆԵՐ 70 ր. և բարձր, ծածկոցներ, մակենաօջներ, երեխաների շորեր 4 ր. և բարձր, հիանալի վերարկուներ 12 ր. և աւելի, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ 2 ր., կողպէքներ և պօղնօաներ 10 կ. և բարձր, րօմ, կոնեակ, պօրտ-վէյն, խերես և անգլիական օղի $1^1/_2$ ր., ՊԱՆԻՐ չեսաեր 60 կ. և բարձր։ Շուտով կը լինի լաւ թէյ 1 ր. ֆունտը։

11—20

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են՝ ԿԱՐԲՈԼԵԱՆ հեղուկ և փոշի տարափոխիկ հիւանդութիւնների դէմ $1^1/_2$ ր., ԽԻՆԱՑԻ ԻՒՂ $1^1/_4$ ր., ցեղրատ մագնեզիայի 2 ր., ՐՕՄ, ԿՕՆԻԱԿ, ՊՕՐՏՎԷՅՆ, ԽԵՐԵՍ և անգլիական օղի $1^1/_2$ ր., ճանապարհի ամաններ դիւժինը 3 ր., թէյի գդալներ (չեն սեւանում) $1^1/_2$ ռուբլ և բարձր, ճանապարհի դանակներ 80 կ., ճանապարհի Փիլիտրներ 4 կ., մատիտներ հատը 1 կոպ., երկաթի գրիչներ 18 հատը 5 կ., ասեղներ 1000 հատը 80 կ., ծածկոցներ, մանկական շորեր և չը թրջվող վերարկուներ 4 ռուբլ և բարձր, գլխարկներ և ժիլետներ 75 կ. և բարձր, կտաւ 10 ր. և բարձր, արիկո 1 ր. և բարձր, ՊԱՐՈՒՍԻՆ 60 կ. և բարձր, բամպէի 1 ր. արշինը, շղթաներ (Արիսինիայի ոսկուց) 50 կ. մինչև 3 ր։ Մի և նոյն խանութում շուտով կը ստացվեն ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր. և բարձր, բիսկվիտներ, մեծ Փիլտրներ և ՎԵՐԱԿԱՆԳՆԵՑՆՈՂ անուանված մի դեղ և այլն։

19—20

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է քաղաքի բնակիչներին, որ գնահատական հարկի 1875 թ. երկրորդ կէսի պակասորդների հաւաքելը Դումայի վճռի համեմատ յանձնած է նահանգական քարտուղար Ալէքսանդր Միխայլովիչ Զաբարովին։ Քաղաքային վարչութիւնը հրաւիրում է կալուածատէրերին, որոնք պէտք է վճարեն պակասորդներ, յանձնեն փողը Զաբարովին և նրանից տպած ապահովագիրներ ստանան։ Հակառակ դէպքում պ. Զաբարովին իրաւունք է տուած անկանոն հարկատուների հետ վարվել քաղաքային կանոնադր. 131 յօդ. համեմատ։ Թիֆլիսի գլխաւոր պ. Պոլիցմէյստերին յայտնած է, որ նա գործակից պ. Զաբարովին հարկաւոր դէպքում։ Այն կալուածների ցուցակը, որոնք պէտք է պակասորդը վճարեն, պակասորդների քանակութիւնը իւրաքանչիւր կալուածից և տուգանքները վարչութեան անդամի ստորագրութեամբ յանձնված են պ. Զաբարովին։ Պ. Զաբարով փողեր կընդունի իր դրասենեակում, որ գտնվում է քաղաքային վարչութեան տան մէջ, առաւօտեան 9—12 ժամը։ Պ. Զաբարովի բացակայութեան ժամանակ փողը կարելի է մոցնել վարչութեան դանձարանը։

3—3

Ալէքսանդրապոլու Հայոց վեճակային Հոգևոր և Արղութեան օրիորդաց ուսումնարաններում հարկաւոր են ուսուցիչներ յետագայ առարկաների համար. 1, ռուսաց լեզուի (երկու ուսուցիչ) 2, հայոց լեզուի (երկու ուսուցիչ) 3, Պատմութեան և Աշխարհագրութեան. 4, բնական գիտութեանց (սկզբունք) 5, Մաթեմատիկայի (թուաբանութիւն, երկրաչափութիւն և սկզբունք ալգեբրայի) և 6, Արղութեան ուսումնարանի համար մի վարժուհի ձեռագործութեան նոյն և վերակացուհի։ Իւրաքանչիւր ուսուցիչ կունենայ շաբաթական մինչև 24 դաս։

Գրեթէ բոլոր առարկաների դասատուութիւնը պէտք է լինի երկրորդին ուսումնարանների բարձր դասատներում։ (Տղայոց ուսումնարանը բացի պատրաստականներից՝ ունի չորս դասատուն, իսկ օրիորդացը—երկու. մատրութիւն կայ բանալ և երրորդը)։ Դասատուութիւնները պէտք է սկսվին անշուշտ օգոստոսի 15-ին։

Ցանկացող ուսուցիչներից կը խնդրվի առանց ուշացնելու յայտնել իրանց պայմանները հետևեալ հասցէով.—Александрополь. Попечительству Армянскаго Духовнаго (или Аргутинскаго Дѣвичья. о) Училища.

6—6

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ

ՀԱՏ ԷԺԻՇՆ ԳՆԵՐՈՎ, ՎԱՐՁՈՎ ԵՎ ՏՐՎՈՒՄ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

КЕНТРОНАКАН ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ)

ստացվել են մեծ քանակութեամբ աշխարհագրական պիտոյքներ՝

ա. Հասարակ երկրագունտներ զանազան մեծութեան	50 կ.	մինչև	3 ր. 50 կ.
բ. Երկրագունտներ պղնձեայ կիսամիջօրէականով. .	1 ր. 20 կ.	—	5 ր. 50 կ.
գ. Երկրագ. պղնձեայ ամբողջ միջօրէականով, հասարակածով և կողմնացոյցով	9 ր.	—	20 ր. և աւելի
դ. Տելլուրի (երկիր և նորա շրջ. արեգակի շուրջ).	18 ր. և աւելի		
ե. Աշխարհագրակ. ատլասներ	55 կ.	—	5 ր.

զ. Մայր ցամաքների և Կովկասի քարտէզներ քարթանի վրա կպցրած և առանց դրան, պատմական, նրկարչական, կենդանաբանական և բուսաբանական ատլասներ, ձեռնարկներ, դասագրքեր և այլն։ Պատուէրները կատարվում են ճիշդ և արագ։

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ

ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 ժամից մինչև 2 ժամ

կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից։

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Յուլիսի 5-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլումպերիալը)	8	10
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1550	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1310	—
Վիգրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիչնի »	235	—
Մարսելի կուրսը 237—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	10	67
Վենայի կուրսը ածէ 112 գլ.	121	—
Դուբեժի բարաթը. . .	5	90
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	300	
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	7	90
» միւս տեսակը.	7	80
» շաքարաւազը .	6	20
» տրանդիտը. .	6	50
» մաքսը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	50
Միւս տեսակը հին սերմից.	7	50
Բուրդը թուչի . . .	8	—
» թարաքամի .	4	20
Ալիւր Շորագալու . .	1	40
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	20
Մոմը բնաճարպի (стеар.)	13	20
Մեղաքս Նուխվայ . .	180	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	45	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	27	—
» լիմանի . . .	22	--
» մարտինկոյինը	20	—

ՀՆՈՒԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Մանկականների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երեքեակ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, $9^1/_2$ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Ա. անով.

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րօպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րօպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.
Փօթիից . .	9. 13
Ռիօն . . .	12. 13
Միխայլօվօ. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

	1	
Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.		
Տեղերի գինը՝ Թիֆլիսից		

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. վէրմիչէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ։

Երեքշաբթի. վէրմիչէվ ներքին հ. Բէյլիս աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան։

Չորեքշաբթի. վէրմիչէվ ներքին հ. Բակատ կրծքային և ջղային։

Հինգշաբթի. վէրմիչէվ ներքին հ. Գավրոնսկիյ կանանց և մանկաբարձութեան, 9—10 ժամ, Բակատ վենեբական և կաշու հ. Օբրէխտ ատամնացաւեր։

Ուրբաթ. վէրմիչէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. վէրմիչէվ ներքին հ. Բէյլիս աչքերի հ. Բակատ կրծքային և ջղային հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ԳԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՀԱՄԶԱՋԻՄԱՆ. ՕՐ. Կ. Մ. Նամակից մի քանի տողեր հանեցինք։ Մասնաւոր մարդկերանց գործերի համար ապագան նրանց կարող է ուրիշ կերպ վարձատրել։

—ՍՏԱՎՐՕՊՕԼ. Ց. Մենք էլ անհամբեր սպասում ենք։ Շատն անցել է քիչը մնացել, երևի շուտով հաստատ տեղեկութիւններ կը ստանանք։

—ԱԲԱՍ-ԹՈՒՄԱՆ. Կ. Բ. Ստացանք նամակը. կուղարկենք «Մշակի» համարները. կէս տարվայ բաժանորդագինը 6 ռուբլ է։

—ՄՕԶԴՕԿ. Ս. Ս. Ստացանք նամակը, գուցէ կը տպենք. արժէ միթէ մի լուրի պատճառով այդպիսի երկար պատասխան գրել։

—ՂԱՐՍ. Կ. Տ. Ս. Մ. Հասցէն փոխեցինք, այսուհետև կուղարկենք Ղարս.

Дозволено Цензурою 5 Іюля 1878 г. Тифлисъ Типографія Мартиросіянца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ